

Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ ՓԲԸ հավասարակշռված ֆոնդ

Ամսական տեղեկատվություն

30/11/2018

Յիմնական տեղեկատվություն

Մեկ փայի զուտ ակտիվների արժեք : **1544,38 (33 դրամ)**
 Ամսաթիվ, որի դրությամբ ներկայացված է զուտ ակտիվների արժեքը : **30/11/2018**
 Կառավարման ներքո գտնվող ակտիվներ : **1709,40 (միլիոն 33 դրամ)**

Ներդրումային քաղաքականությունը


Ներդրումային թիվը ձգտում է առավելագույնի հասցնել ակտիվների եկամտաբերությունը՝ ներդրումներ իրականացնելով կայուն եկամտային և բաժնային արժեթղթերում: Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել 33 դրամով և արտարժույթով արտահայտված փողի շուկայի գործիքներում, պետական և կորպորատիվ պարտատոմսերում, բանկային ավանդներում և բաժնետոմսերում, ինչպես նաև ներդրումային ֆոնդերում, որոնք ներդրումներ են իրականացնում բացառապես վերոնշյալ ֆինանսական գործիքներում:

Ֆոնդի հիմնական բնութագրիչները

Իրավական ձև : **Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ**
 Ֆոնդի ստեղծման ամսաթիվը : **11/03/2014**
 Բաժանորդագրության վճարը : **0%**
 Կառավարչի պարգևավճարի մեծությունը՝ ներառյալ պահառուի պարգևավճարը (%) : **1,30%**
 Մարման վճարի առավելագույն մեծությունը (%) : **2,00%**
 Պարգևավճար՝ կախված եկամտաբերությունից : **0%**

Ֆոնդի եկամտաբերությունը

Ֆոնդի եկամտաբերությունը ստեղծման պահից (100-ի նկատմամբ)



Եկամտաբերության վերլուծական տվյալներ

	Ստեղծման պահից
Առավելագույն անկումը	-7,92%
Վերականգնման ժամանակահատված (օրերով)	439
Վատագույն ամիս	12/2014
Վատագույն ամսվա եկամտաբերությունը	-3,52%
Լավագույն ամիս	07/2016
Լավագույն ամսվա եկամտաբերությունը	2,97%

Եկամտաբերություն (տարեկանացված)

	Տարվա սկզբից՝ սկսած	1 ամսվա	3 ամիսների	1 տարվա	3 տարիների	5 տարիների	Ստեղծման պահից՝ սկսած
Սկսած	29/12/2017	30/10/2018	31/08/2018	30/11/2017	30/11/2015	-	11/03/2014
Ֆոնդ	4,77%	0,75%	-0,16%	5,63%	11,72%	-	9,63%

Ռիսկայնության վերլուծական տվյալներ

	1 տարի	3 տարի	5 տարի	Ստեղծման պահից
Ֆոնդի ռիսկայնությունը	2,90%	3,00%	-	3,65%

Ֆոնդի ռիսկայնությունը բնութագրվում է տատանողականության (volatility) ցուցանիշով: Վերջինս վիճակագրական ցուցանիշ է, որով չափվում է ակտիվի արժեքի տատանողականությունը իր միջին արժեքի շուրջ: Որքան ավելի բարձր է տատանողականության ցուցանիշը, այնքան ավելի ռիսկային է ակտիվը:


Ֆոնդի եկամտաբերության ցուցանիշները հաշվարկվում են 33 դրամով և ներառում են կառավարչի պարգևավճարը, միջնորդավճարները և պահառուության վճարները: Ֆոնդի եկամտաբերությունը հաշվարկվում է 33 կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մարտի 6-ի թիվ 62-Ն որոշմամբ հաստատված «Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների եկամտաբերության հաշվարկի մեթոդաբանությունը և եկամտաբերության մասին տեղեկատվության ներկայացման չափանիշները» կանոնակարգ 10/17-ով սահմանված կարգով: Ֆոնդի ռիսկայնությունը հաշվարկվում է Ամունդի իմբի մեթոդաբանության հիման վրա՝ հիմք ընդունելով շաբաթական եկամտաբերության ցուցանիշները: Ներդրումների արժեքը, ինչպես նաև նրանցից ակնկալվող եկամուտները կարող են նվազել, ինչպես նաև աճել: Ֆոնդերի նախկին եկամտաբերության ցուցանիշները չեն հանդիսանում վստահելի կողմնորոշիչ ընթացիկ կամ ապագա եկամտաբերության ցուցանիշների համար: Եկամտաբերության ցուցանիշները չեն արտացոլում փայերի թողարկման կամ մարման ժամանակ մասնակիցների կրած ծախսերը:

Ֆոնդերի կառավարչի մեկնաբանությունը

Նույններ ամսվա ընթացքում ֆոնդի ակտիվների կառուցվածքում ավելացրել ենք բաժնետոմսերի (18%-ից մինչև 19%), ինչպես նաև ՀՀ կորպորատիվ պարտատոմսերի (15%-ից մինչև 17%) կշիռները՝ ի հաշիվ ֆոնդում կանխիկ միջոցների կշռի նվազման, որը նույնների վերջի դրությամբ կազմել է 3%՝ նախորդ ամսվա վերջի 5%-ի դիմաց: Ֆոնդի արժույթային կառուցվածքում ավելացել է նաև արտարժույթային ներդրումների կշիռը՝ ամսվա վերջում կազմելով ֆոնդի ակտիվների շուրջ 32%-ը՝ նախորդ ամսվա վերջի 31%-ի դիմաց: Ինչ վերաբերում է ֆոնդի եկամտաբերության ցուցանիշներին, նշենք, որ նույններ ամսվա ընթացքում դրանք դրական են եղել՝ պայմանավորված թե՛ տեղական, և թե՛ արտասահմանյան ներդրումների գների աճով:

Ֆոնդի կառուցվածքը


Կառուցվածքը՝ ըստ ակտիվների դասերի




Կառավարման ներքո գտնվող ակտիվների շարժը

Կառավարման ներքո գտնվող ակտիվներ	Մեկ փայի զուտ ակտիվների արժեք
29/06/2018	1498380420
31/07/2018	1579792578
31/08/2018	1587659725
28/09/2018	1653864271
30/10/2018	1667292908
30/11/2018	1709399083


Կառուցվածքը՝ ըստ արժույթների




Գլոբալ տարածաշրջանային բաշխվածություն




Գլոբալ ոլորտային բաշխվածություն




Գլոբալ աշխարհագրական բաշխվածություն




Ցուցակված արժեթղթերի թողարկողի երկիրը



Ավանդառու բանկի գրանցման երկիրը




Ներդրումային ֆոնդերի գրանցման երկիրը



Ֆոնդի կառուցվածքը/պարտատոմսերի վերլուծություն


Կառուցվածքը՝ ըստ թողարկողի տեսակի

% ակտիվների նկատմամբ




Կառուցվածքը՝ ըստ վարկանիշերի

% ակտիվների նկատմամբ




Կառուցվածքը՝ ըստ երկրների


% ակտիվների նկատմամբ



Պետական պարտատոմսերի բաշխվածությունը ըստ երկրների




Կառուցվածքը՝ ըստ արժույթների




Ֆոնդի կառուցվածքը/բաժնետոմսերի վերլուծություն


Կառուցվածքը՝ ըստ աշխարհագրության




Կառուցվածքը՝ ըստ ոլորտների



Կառուցվածքը՝ ըստ երկրների



Կառուցվածքը՝ ըստ շուկայական կապիտալացման



■ Մեծ կապիտալացում ունեցող ընկերություններ >= 8 միլիարդ եվրո
 ■ Միջին կապիտալացում ունեցող ընկերություններ : 2-8 միլիարդ եվրո
 ■ Փոքր կապիտալացում ունեցող ընկերություններ <= 2 միլիարդ եվրո

Ֆոնդի հիմնական բնութագրիչները

Իրավական ձև	Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ ARM
Ակտիվների կառավարիչ ընկերությունը	Amundi ACBA Asset Management CJSC
Պահառու և ռեեստրավարը	Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ
Ֆոնդի ստեղծման ամսաթիվը	11/03/2014
Ֆոնդի արժույթը	ՀՀ դրամ
Ֆոնդի եկամուտների բաշխումը	Ֆոնդի եկամուտները վերաներդրվում են
ՉԱԱ-ի հաշվարկման հաճախականությունը	Օրական
Բաժանորդագրության վճարը	0%
Կառավարչի պարգևավճարի մեծությունը՝ ներառյալ պահառուի պարգևավճարը (%)	1,30%
Պարգևավճար՝ կախված եկամտաբերությունից	0%
Մարման վճարի առավելագույն մեծությունը (%)	2,00%
Frais courant KID Frais	

Իրավական տեղեկատվություն

Ֆոնդի վերաբերյալ սույն փաստաթուղթը կրում է տեղեկատվական և ոչ պայմանագրային բնույթ: Ֆոնդի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է Ֆոնդի կանոններում, որը հրապարակված է Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ ՓԲԸ-ի ինտերնետային կայքում (www.amundi-acba.am): Ֆոնդում ներդրումները կապված են ռիսկերի հետ, մասնավորապես ֆոնդի զուտ ակտիվների արժեքը կարող է տատանվել, իսկ ֆոնդի ակտիվների հաշվին կատարված ներդրումների արժեքը՝ ինչպես բարձրանալ, այնպես էլ՝ նվազել: Եթե այլ բան նշված չէ, սույն տեղեկատվական թերթիկում ներառված տեղեկատվության աղբյուրը Ամունդի-ԱԿԲԱ-ն է: Տեղեկատվական թերթիկները հրապարակվում են ամսական կտրվածքով: